ունենալ. եթէ էլուլիւցիան հող չէ պատրաստել, այդպիսի երևոյթները պատմութեան մէջ միայն արկածի բնոյթ ունեն, և Ադրբէջանը դիմեց արկածախնդրութեան:

Իւրաքանչիւր մարդ, որ ծանօթ է հասարակական կեանքի պատմութեան, պէտք է լաւ դիտենայ, որ Ադրբէջանում կատարւում է մի կեղծիք, և այսօր Հայաստանի խորհրդարանի պարտքը պիտի լինի պատռել դիմակն ու մերկացնել այդ կեղծիքը:

Պատգամաւորներ, իր կոմունիստական կեանքի երեք օրը դեռ չապրած՝ Ադրբէջանը անում է առաջին քայլը. պէտք էր սպասել, որ նա հանդէս կը գայ նոր նշանաբաններով, որ նա բոլոր միջոցներով կը ձգտի վերջ տալու արիւնհեղութիւններին, սակայն, դրանց փոխարէն, վերջնագիր է ուղարկում Հայաստանին և կամենում է Ղարաբաղի ու Զանգեզուրի ըմբոստ ժողովրդին իր ձեռքը ձգել, խանական տիրապետութեան մէջ կեղեքելու և ճնշելու: Այս փաստն ինքնին մի փառաւոր ապացոյց է, որ Ադրբէջանի նոր կառավարութիւնը երբեք կոմունիստական չէ, նա հին կառավարութեան հարազատ դաւակն է ու նրա նպատակների մոլի հետապնդողը:

Ադրբէջանի վերջնագրին մենք ունենք միայն մէկ պատասխան — Ղարաբաղը և Զանգեզուրը, ունենալով հոծ հայութիւն, պէտք է միանան Հայաստանին (ադմկալից ու երկարատև ծափահարութիւն): Հայաստանի կառավարութիւնը պէտք է ձեռք առնի բոլոր միջոցները, պահպանելու Հայաստանի անբաժան մասը կազմող Ղարաբաղն ու Զանգեզուրը (բուռն ծափեր):

Մենք ստացել ենք նաև երկրորդ վերջնագիրը, այս անգամ արդէն Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից: Նախ, կարևոր եմ համարում մատնանշել, որ Հայաստանի վիճակը խորհրդային կենտրոններում չէ պարզաբանուած ճշտօրէն և իմ խորին համոզմամբ այս վերջնագիրը արդիւնք է Ադրբէջանի կեղծ ինֆորմացիայի: Ամենից առաջ կառավարութեան պարտքն է կանոնաւորել ինֆորմացիան:

Միւս կողմից, մենք չենք կարող անտեսել, որ հայ ժողովուրդը կուլտուրական կապերով կապուած է Ռուսաստանի հետ. այդ այդպէս լինելով հանդերձ, չենք կարող նոյնպէս չյիշել, որ Ռուսաստանից ընդունած կուլտուրայի վրա հայ ժողովուրդը միշտ դրել է իր հանճարի, իր ստեղծագործութեան ուրոյն դրոշմը, որ ապացոյց է նրա կենսունակութեան ու սեփական կորովի:

Ցարգելով կուլտուրական կապը, մենք պարզ և որոշ պէտք է յայտարարենք սովետական Ռուսաստանին, որ հայ ժողովուրդը ազատ պիտի լինի, որ նրա ինքնորոշելու իրաւունքը անվիճելի է հէնց իր հոչակաւոր նշանաբանի համաձայն: Ես համոզուած եմ, Խորհրդային Ռուսաստանը այդ իրաւունքը խախտել չի կարող: Կոմունիստների Մոսկուայի համագումարը ի լուր աշխարհի յայտարարել է, որ խորհրդային իշխանութիւնը պէտք է ազատագրէ բոլոր ճնշուածներին ու նրանց ազատ զարգացման հնարաւորութիւն պիտի տայ: Յատկապէս հայ դատի նկատմամբ այդ նոյն խորհրդային իշխանութիւնը թէ յատուկ դեկրետով և թէ խորհուրդների երրորդ համագումարում որոշակի դրական վերաբերմունք ունի ցուցադրած. թէ այդ դեկրետով և թէ համագումարի որոշմամբ նա ճանաչել և ընդունել է անկախ Հայաստանի գոյութիւնը: Հայ ժողովրդի համար այժմ հասել է ժամը ազատութեան, և խորհրդային իշխանութիւնը պէտք է կատարէ իր խօսքը՝ ճանաչելով ու ամրապնդելով մեր ազատութիւնը: